

Հոգաբարձուների խորհրդի նախագահ, դոցենտ

 Մ. Կ. Տիտանյան

**«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄՄԿԾ-Ի
2024-2029 թթ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային անվտանգության կարևորագույն խնդիրներից է որակյալ կրթության այնպիսի համակարգի ձևավորումը, որի արդյունքում կպատրաստվեն գիտելիքահեն տնտեսության և ժամանակակից հասարակության պահանջներին բավարարող մրցունակ մասնագետներ:

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ ՇՏՀ) միջին մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ Քոլեջ) **առաքելությունն է՝** պատրաստել ժամանակակից գիտելիքներով և գործնական հմտություններով զինված բարձրակարգ մասնագետներ գյուղատնտեսության, շինարարության, դիզայնի, տնտեսագիտության, տեղեկատվական և այլ տեխնոլոգիաների ոլորտներում, ապահովել ուսումնառության որակյալ միջավայր՝ խթանելով ուսանողների մասնագիտական աճը, ձեռնարկատիրական մտածողությունն ու համայնքային ներգրավվածությունը, համադրելով ավանդույթները նորարարական մեթոդների հետ՝ նպաստելով ՀՀ կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Քոլեջը կարևորում է տեխնոլոգիական առաջընթացը, բնապահպանական գիտակցությունը և ազգային մշակույթի պահպանումը՝ որպես զարգացման հիմնական հիմք:

Քոլեջի տեսլականն է՝ դառնալ իր առաքելության ոլորտներում առաջադեմ գիտելիքներ տրամադրող և արդյունավետ կառավարում ունեցող միջին մասնագիտական կրթական հաստատություն, ապահովելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում կրթական և հետազոտական գործընթացներում:

Քոլեջը պատրաստվում է իրականացնել իր առաքելությունը՝ համաձայն ռազմավարական ծրագրի նպատակների, որոնք վերաբերում են նրա գործունեության բոլոր բնագավառներին և որոնց արդյունավետ իրականացումը կապահովի Քոլեջի կայուն առաջընթացը:

Առաքելությունից բխող իր գործունեությունն իրականացնելիս Քոլեջն առաջնորդվում է հետևյալ արժեքներով.

✓ **Կրթության որակ**

Քոլեջը կարևորում է առաքելության իրագործմանն ուղղված որակի ներքին ապահովման մշակույթի ձևավորումը և զարգացումը.

✓ **Կիրառականություն**

Քոլեջը կարևորում է կիրառական վերջնարդյունքների վրա հենված կրթական ծրագրերի և շահակիցների պահանջների բավարարմանն ուղղված կիրառական հետազոտությունների իրականացումը.

✓ **Ակադեմիական ազատություններ**

Քոլեջը կարևորում է ակադեմիական անձնակազմին և սովորողներին ուսուցանելու, հետազոտություն իրականացնելու և ուսանելու անկախության իրավունքը:

✓ **Ուսանողակենտրոն ուսուցում**

Քոլեջի համար առաջնահերթություն է ուսանողի բավարարվածությունն ուսումնական միջավայրից և նրա կրթական ձեռքբերումները.

✓ **Գործունեության արդյունավետություն**

Քոլեջի գործունեության բոլոր բնագավառներում հատուկ նշանակություն է տրվում արդյունավետությանը, որն ընդունվում է որպես գործունեության տարբեր ուղղություններով Քոլեջի և նրա առանձին ստորաբաժանումների ձեռքբերումների գնահատման կարևորագույն չափանիշ.

✓ **Նորարարության հետևողական խրախուսում**

Քոլեջը կարևորում է աշխատողների և ուսանողների խնդիրների լուծմանը միտված մոտեցումները, նորարարական գաղափարների և մոտեցումների կիրառումը և զարգացումը.

✓ **Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ և սոցիալական պատասխանատվության մշակույթ**

Քոլեջն ապահովում է հարմարավետ աշխատանքային պայմաններ իր աշխատողների համար, նպաստում է Քոլեջի շահի և հեղինակության նկատմամբ անձնական և կոլեկտիվ պատասխանատվության գիտակցման խորացմանը և դրանց շարունակական ապահովմանը, խնդիրների լուծմանը, ինչպես նաև Քոլեջին առնչվող որոշումների կայացման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

ՔՈԼԵՋԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Տրամադրել Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, ՀՀ աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրեր՝ ուղղված շրջանավարտների աշխատանքային գործունակության բարելավմանը, բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը Քոլեջում սրացած կրթությունից

Խնդիր 1.1. Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, ՀՀ աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ վերափոխել և բարելավել մասնագիտության կրթական ծրագրերի (ՄԿԾ) կառուցվածքը և բովանդակությունը

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1.1.1. Մշակել կրթական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը սահմանող նորմատիվ փաստաթղթերի փաթեթ:

1.1.2. Կրթական ծրագրերը համապատասխանեցնել ՀՀ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին՝ հաշվի առնելով միջազգային առարկայական հենանիշերը (բենչմարք):

1.1.3. Ներդնել գործնական հմտությունների տիրապետող մասնագետների պատրաստմանը միտված ՄՄԿ-ի կրթական ծրագրեր:

1.1.4. Մշակել ուսումնական գործընթացի կազմակերպման կարգեր:

1.1.5. Ուսումնառության արդյունավետության բարձրացման նպատակով, մշակել և իրականացնել պրակտիկաների (փորձուսուցման) համալիր միջոցառումների ծրագրեր՝ հատկացնելով անհրաժեշտ նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

1.1.6. Իրականացնել լրացուցիչ կրթական, խորհրդատվական և վերապատրաստման ծրագրեր:

1.1.7. Օգտվելով կրթության որակի գնահատման՝ ՇՏՀ-ում առկա էլեկտրոնային գործիքամիջոցների ընձեռած հնարավորություններից, իրականացնել Քոլեջի կրթական ծրագրերից և շրջանավարտներից գործատուների բավարարվածության ամենամյա պարտադիր ուսումնասիրություններ՝ կրթական ծրագրերի մշտալավարկման և շրջանավարտների ծառայունակության բարձրացման ճանապարհով նրանց պահանջարկվածության երաշխավորման նպատակով:

Խնդիր 1.2. Արդիականացնել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1.2.1. Ներդնել գիտամանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմներ, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների կիրառմանը:

1.2.2. Կիրառել ուսումնառության և դասավանդման «ոչ ստանդարտ» արդյունավետ այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ կարճաժամկետ ինտենսիվ դասախոսությունները (այդ թվում՝ հրավիրված մասնագետների կողմից), սեմինարներն ու քննարկումները, «ուղեղային գրոհներն» ու գործնական խաղերը, ամառային դպրոցները և այլն, նախապատվությունը տալով դասավանդման ինտերակտիվ մեթոդներին:

1.2.3. Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:

1.2.4. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ՝ գրագողությունը կանխելու նպատակով:

1.2.5. Ուսումնառության արդյունավետության և կրթության որակի գնահատման լավարկման նպատակով ներմուծել ուսանողների՝ կրթական վերջնարդյունքներով (գիտելիք-հմտություն-կարողություն) պայմանավորված գնահատման նոր ձևեր ու

մեխանիզմներ և սահմանել առանձին արդյունարար պահանջներ ընդհանուր ու մասնագիտական կրթափուլերի համար:

Խնդիր 1.3 Ստեղծել արդիական բաց էլեկտրոնային գիտակրթական միջավայր՝ Քոլեջի ուսանողների ուսումնական ինքնուրույն աշխատանքի կատարելագործման համար և ապահովելով վերջիններիս ազատ մուտքը դեպի տեղեկատվական ռեսուրսներ

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1.3.1. Արդիականացնել էլեկտրոնային ուսուցման մեթոդների և հեռավար կրթական տեխնոլոգիաների կիրառումն ապահովող տեղեկատվական միջավայր:

1.3.2. Ներդնել էլեկտրոնային ուսուցման արդի տեխնոլոգիաներ և միջոցներ:

1.3.3. Դասավանդման գործընթացում էլեկտրոնային ռեսուրսներ կիրառելու համար ներդնել դասախոսների խրախուսման մեխանիզմներ:

1.3.4. Իրականացնել Քոլեջի գիտական գրադարանի թվայնացման գործընթաց:

1.3.5. Ընդլայնել համագործակցությունը ՀՀ և արտերկրի հրատարակչությունների և գրադարանների հետ:

2.ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հեղազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հեղազոտական աշխատանքների միջազգայնացմանը

Խնդիր 2.1 Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և ընդլայնել հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածություն

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

2.1.1. Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և ընդունված այլ ցուցանիշներով:

2.1.2. Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար:

2.1.3. Խրախուսել ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը և ղեկավարումը:

2.1.4. Ընդլայնել հետազոտական աշխատանքի իրականացումը ՄՄԿ-ի կրթական ծրագրերում:

2.1.5. Անդամակցել տնտեսական ընկերությունների՝ ներգրավելով ներդրողներին ՇՏՀ/Քոլեջի գիտական արդյունքների առևտրայնացման նպատակով:

Խնդիր 2.2. Զարգացնել արտաքին շահակիցների հետ հետազոտական համագործակցությունը

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

2.2.1. Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը:

2.2.2. Նախաձեռնել համագործակցային ծրագրեր տարածաշրջանային քոլեջների և գիտական կազմակերպությունների հետ, ներգրավելով առաջատար գիտաշխատողներին:

2.2.3. Կազմակերպել գիտական ընթերցումներ, սիմպոզիումներ, սեմինարներ:

2.2.3. Նախաձեռնել ՀՀ կազմակերպությունների կարիքներից բխող կիրառական հետազոտական ծրագրեր:

Խնդիր 2.3. Ստեղծել մտավոր սեփականության օբյեկտներ

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

2.3.1. Ստեղծել բարենպաստ պայմաններ դասախոսների և սովորողների համար գիտական հոդվածներ, մենագրություններ, դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ գրելու և արտոնագրեր ստանալու համար:

2.3.2. Ձևավորել մեխանիզմներ, որոնք կնպաստեն Քոլեջում տարվող կիրառական հետազոտությունների արդյունքների ապրանքայնացմանը:

Խնդիր 2.4. Ընդլայնել ուսանողների հեղինակությամբ/համահեղինակությամբ, տպագրված աշխատանքների քանակը

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

2.4.1. Մշակել մեխանիզմներ Քոլեջում իրականացվող հետազոտական աշխատանքներին ուսանողների ներգրավածությունը ավելացնելու համար:

2.4.2. Ստեղծել բարենպաստ պայմաններ ուսանողների հետազոտական աշխատանքները տպագրելու համար:

2.4.3. Աջակցել ուսանողների հետազոտական աշխատանքների ներկայացմանը հանրապետության և միջազգային գիտաժողովներում և ցուցահանդեսներում:

2.4.4 Ակտիվացնել ՈԻԽ համագործակցությունը հայրենական և արտերկրի բուհերի համանման կառույցների հետ:

Խնդիր 2.5. Սահմանել Քոլեջի պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների կողմից իրականացվող գիտահետազոտական ուղղվածությունը

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

2.5.1. Մշակել գիտական հետազոտությունների գերակա ոլորտների ընտրության քաղաքականություն ու ընթացակարգեր և իրականացնել գործընթացների տարեկան մշտադիտարկում:

2.5.2. Մշակել և իրականացնել Քոլեջի հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

3.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Խթանել արտաքին կապերը և Քոլեջի միջազգայնացումը

Խնդիր 3.1 Կիրառել միջազգային փորձը եվրոպական կրթական համակարգում ինտեգրվելու նպատակով

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

3.1.1. Բարելավել Քոլեջի միջազգային գործունեության պլանավորումն ու տեղեկատվական ապահովումը, ստեղծել արտաքին կոնտակտների միասնական տեղեկատվական բազա, ձևավորել նախագծերի մշակմանը, դրամաշնորհների ձեռքբերմանն ու միջազգային կապերի ձևավորմանն աջակցող խորհրդատվական ծառայություն:

3.1.2. Մշակել և ներդնել Քոլեջի միջազգայնացման ուսումնակրթական և հետազոտական բաղադրիչների փոխհամաձայնեցման, փոխհարստացման և արդյունավետության բարձրացման կենտրոնացված համակարգման միասնական մեխանիզմներ:

3.1.3. Տեղայնացնել միջազգայնացման փորձի էլեմենտներ և ինտեգրել Քոլեջի գործունեության ոլորտներում:

3.1.4. Մշակել միջազգայնացման քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացնել գործընթացների տարեկան մշտադիտարկում:

3.1.5. Մշակել Քոլեջի միջազգայնացման գործընթացների գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմ և դրանց հիման վրա իրականացնել պարբերական համեմատական վերլուծություններ (բենչմարքինգ):

Խնդիր 3.2 Ոլորտի աշխատակազմի մասնագիտական ուսուցման, վերապատրաստումների կազմակերպման և շարժունությունը խթանող մեխանիզմների ձևավորում

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

3.2.1. Բարձրացնել տեղեկացվածության մակարդակը հետազոտական և կրթական ծրագրերի վերաբերյալ և տրամադրել խորհրդատվություն՝ դրամաշնորհների հանրապետական և միջազգային աղբյուրների որոնման ու ծրագրային առաջարկների մշակման համար:

3.2.2. Ընդլայնել և ամրապնդել համագործակցությունը արտերկրի առաջատար քոլեջների հետ՝ համատեղ կրթական ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ:

3.2.3. Շարունակաբար կատարելագործել Քոլեջի կրթական ծրագրերն ու դասընթացները, գիտելիքների գնահատման չափանիշները՝ եվրոպական պահանջներին համահունչ, նպաստելով ուսանողների միջքոլեջական շարժունությանը, ուսումնառության արդյունքների փոխադարձ ճանաչմանը:

3.2.4. Շահագրգիռ կողմերի հետ ձևավորել գործակցային ցանց՝ իրականացնելով հետազոտական, կրթական և գիտաարտադրական տարբեր ծրագրեր:

3.2.5. Ընդլայնել համագործակցությունը արտերկրի քոլեջների, գիտական կազմակերպությունների և միջազգային կառույցների հետ՝ կարևորելով սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակումն ու շարժունությունը, համատեղ հետազոտական աշխատանքների ու կրթական միջոցառումների իրականացումը, ընդլայնելով և խորացնելով առաջատար գործընկեր քոլեջների հետ միջազգային փոխանակման ծրագրերը (Erasmus+):

Խնդիր 3.3 Շահագրգիռ անձանց հետ փոխհամագործակցության մեխանիզմների բարելավում

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

3.3.1. Խթանել ՇՏՀ-ի և Քոլեջի համագործակցությունը արտասահմանյան առաջատար համալսարանների, քոլեջների և գիտական կենտրոնների հետ համատեղ նախագծերի նախաձեռնումն ու իրականացումը՝ երկկողմ պայմանագրերի, կոնսորցիումների և միջազգային ցանցերի շրջանակներում:

3.3.2. Աջակցել Քոլեջի գիտամանկավարժական կազմի ընդգրկմանը միջազգային նախագծերում՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն նախագծերի ֆինանսավորման միջազգային աղբյուրների որոնման և հայտերի մշակման հարցերում:

3.3.3. Ընդլայնել Քոլեջի հնարավորությունները՝ մասնակցելով դրամաշնորային ծրագրերի և ներգրավելով օրենսդրությամբ չարգելված ֆինանսական միջոցներ:

3.3.4. Համագործակցել պետական, մասնավոր, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների հետ, ընդլայնել Քոլեջի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների կապը դոնոր կազմակերպությունների հետ:

Խնդիր 3.4 Քոլեջի ճանաչողականության բարձրացում՝ փոխհամագործակցության միջոցով

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

3.4.1. Ներդնել Քոլեջում դուալ կրթական ծրագրեր,

3.4.2. Աջակցել Քոլեջի ուսանողական ինքնակառավարման կառույցների արտաքին կապերի զարգացմանն ու նրանց ակտիվ ներգրավմանը արտերկրի ուսանողական կազմակերպություններում և ծրագրերում:

3.4.3. Օգտագործել միջազգային շարժունության ծրագրերը՝ արտասահմանյան առաջատար քոլեջներում ու գիտական կենտրոններում Քոլեջի միջազգային դրական իմիջի ամրապնդման և գիտակրթական միջազգային կառույցներում մասնակցություն ապահովելու համար:

3.4.4. Բազմազանեցնել Քոլեջի օտարալեզու արտաքին տեղեկատվությունը, դրա տարածման ձևերն ու շրջանակները՝ շեշտը դնելով տեղեկատվական արդիական տեխնոլոգիաների ինտենսիվ կիրառության վրա, ներառյալ համալսարանական կայքը:

3.4.5. Ընդլայնել Քոլեջի կայքում տեղադրվող նյութերի ծավալը (այդ թվում՝ մասնագիտական կրթական ծրագրերը)՝ առնվազն երեք լեզուներով:

3.4.6. Կազմակերպել կրթական, մշակութային և այլ միջոցառումներ՝ օժանդակելով սովորողներին և աշխատակիցներին՝ միջազգային ծրագրերին մասնակցելու նպատակով:

3.4.7. Ստեղծել կապեր սփյուռքահայ մասնագետների հետ՝ օգտագործելով նրանց ներուժը Քոլեջի զարգացման գործընթացում:

Խնդիր 3.5 Կրթության, հետազոտության և թիրախային ոլորտների համար քաղաքականությունների մշակման և օրենսդրական դաշտի կարգավորման խթանում

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

3.5.1. Համապատասխան ատյաններին ներկայացնել Քոլեջի գործունեությանը առնչվող բարեփոխումների առաջարկներ:

3.5.2. Խթանել կրթության, հետազոտության և թիրախային ոլորտների համար քաղաքականությունների մշակումը:

4.ԿԱԴՐԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ապահովել կադրային ներուժի զարգացում՝ միտված հեռանկարային խնդիրների լուծման և Քոլեջի զարգացման ծրագրի իրականացմանը

Խնդիր 4.1 Զարգացնել Քոլեջի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերի մասնագիտական հմտությունները և բարձրացնել որակավորման մակարդակը

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է

4.1.1. Իրականացնել Քոլեջի պրոֆեսորադասախոսական առկա կազմի գնահատում՝ առաջարկվող կրթական ծրագրերի որակի ապահովման պահանջներին համապատասխանության տեսանկյունից:

4.1.2. Ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման գործող համակարգի շարունակական զարգացումն ու արդիականացումը: Թարմացնել և

բազմազանացնել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և մասնագիտական լրացուցիչ կրթության կրթական ծրագրերի փաթեթները:

4.1.3. Կատարելագործել դասախոսական պաշտոնների տեղակալման պահանջվող չափանիշներն ու գործընթացները: Մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի մրցութային ընտրության պահանջների նորացված համակարգ՝ հաշվի առնելով կրթական գործունեության նորարական մոտեցումները, գիտահետազոտական նախագծերում և այլ նախաձեռնություններում նրանց համակարգված մասնակցությունը:

4.1.4. Իրականացնել Քոլեջի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետության բազմագործոն վարկանիշային պարբերական գնահատում: Գնահատման արդյունքները հիմք ընդունել միջտարակարգային առաջընթացի և աշխատավարձի բարձրացման համար:

4.1.5. Ձևավորել Քոլեջում պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության խրախուսման մեխանիզմ: Նյութական, բարոյական կամ խրախուսման այլ ձևերով խթանել դասախոսների ստեղծագործական և ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետության բարձրացումը:

4.1.5. Խրախուսել դասախոսների միջբուհական, միջքոլեջական, գիտական և մանկավարժական շարժունությունը: Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող միջազգային շարժունության ծրագրերին:

4.1.6. Ներդնել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիր՝ կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաներին և օտար լեզուներին տիրապետումը:

4.1.7. Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:

4.1.8. Վարչական կազմի շրջանում կազմակերպել վերապատրաստումներ՝ ուղղված կառավարման հմտությունների զարգացմանը:

Խնդիր 4.2 Բարելավել կադրային քաղաքականությունը՝ համալրելով Քոլեջը բարձր որակավորում ունեցող անձնակազմով

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

4.2.1. Մշակել և իրականացնել պրոֆեսորադասախոսական կազմի համալրման երկարաժամկետ ծրագիր:

4.2.2. Բարելավել Քոլեջի կառուցվածքը և հաստիքացուցակների ձևավորման գործընթացը՝ հաշվի առնելով կառավարման գործընթացներն ու ռեսուրսային ապահովվածության քաղաքականությունը:

4.2.3. Մշակել աշխատանքի նկարագրեր վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերի համար:

4.2.4. Ուսումնական գործընթացում ներգրավել տեղի առաջատար և արտերկրյա քոլեջների և համալսարանների դասախոսներ:

4.2.5. Պայմաններ ստեղծել խոստումնալից շրջանավարտների կրթությունը շարունակելու համար՝ հետագայում նրանց դասախոսական կազմում ընդգրկելու նպատակով:

4.2.6. Ձևավորել երիտասարդ դասախոսների խնամակալության (մենթորության) համակարգը:

4.2.7. Զարգացնել ատենախոսություն պաշտպանող դասախոսների և գիտաշխատողների աջակցման համակարգը:

5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ, ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների/շրջանավարտների և գործադրողների միջև համագործակցության հնարավորությունների ընդլայնում և շարունակական կրթության համակարգի ձևավորում

Խնդիր 5.1. Գործատուների, ձեռնարկատերերի և շահագրգիռ այլ կողմերի հետ արդյունավետ համագործակցության հնարավորությունների և մեխանիզմների զարգացում

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

5.1.1. Ձևավորել Քոլեջի պրոֆիլին բնորոշ գործատու կազմակերպությունների տվյալների բազա: Պարբերաբար իրականացնել աշխատաշուկայի առկա վիճակի և զարգացման միտումների մոնիթորինգ:

5.1.2. Զարգացնել պայմանագրային հարաբերությունները Քոլեջի պրոֆիլին բնորոշ արտադրական ոլորտների և բիզնեսի հիմնական հատվածների հետ՝ մասնակից դարձնելով նրանց իրենց կադրերի պատրաստման համար անհրաժեշտ ռեսուրսների ձևավորմանը:

5.1.3. Ստեղծել քոլեջ-արդյունաբերություն փոխկապակցության աշխատանքային հարթակ՝ նպատակ ունենալով ընդլայնել գործատուների ներգրավվածությունը ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կազմման, պրակտիկաների կազմակերպման և այլ ուսումնական հարցերում՝ համահունչ աշխատաշուկայի պահանջարկին և դրա զարգացման միտումներին:

5.1.4. Պարբերաբար կազմակերպել գործնական հանդիպումներ ոլորտային գործատուների և ձեռնարկատերերի հետ՝ քննարկելու հնարավոր համագործակցության շրջանակները:

5.1.5. Կնքել համագործակցության հուշագրեր, պայմանագրեր և /կամ/ համաձայնագրեր շահագրգիռ գործատուների հետ:

5.1.6 Շահագրգիռ գործատուների հետ կազմակերպել քննարկումներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ, աշխատանքի տոնավաճառներ և այլ միջոցառումներ:

Խնդիր 5.2 Սովորողների/շրջանավարտների զբաղվածությանը և կարիերայի աճին նպաստող հնարավորությունների ընդլայնում

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

5.2.1 Սովորողներին ներկայացնել տեղեկություններ շահագրգիռ գործատուների պահանջների և թափուր աշխատատեղերի մասին:

5.2.2. Ուսանողների/շրջանավարտների համար պարբերաբար կազմակերպել սեմինարներ կապված մասնագիտական կողմնորոշման, աշխատաշուկայի արդի պահանջների և աշխատանքի որոնման ձևերի հետ :

5.2.3. Մշակել և կիրառել Քոլեջ-գործատու երկխոսության մոդել՝ կրթական ծրագրերի արդիականացման գործընթացում գործատուներին ներգրավելու և գործատուների հետ անմիջական համագործակցային կապերը ուժեղացնելու նպատակով:

5.2.4. Գործատուների շրջանում իրականացնել հարցումներ աշխատաշուկայում Քոլեջի շրջանավարտների մրցունակության մակարդակը գնահատելու և կրթական ծրագրերը բարելավելու նպատակով:

5.2.5. Շարունակել ընդլայնել և խորացնել ՇՏՀ «Կարիերայի զարգացման և շարունակական կրթության կենտրոն»-ի խողովակով ձևավորված Քոլեջի և գործատուների միջև համագործակցային կապերի ցանցը՝ նպատակ ունենալով աջակցել և հնարավորինս մատչելի դարձնել Քոլեջի շրջանավարտների մուտքը աշխատաշուկա:

Խնդիր 5.3 Շրջանավարտների և Քոլեջի միջև կապի ապահովում

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

5.3.1. Համալրել Քոլեջի շրջանավարտների տվյալների բազան՝ գնահատելով նրանց զբաղվածության աստիճանը և համապատասխանությունը բազային կրթությանը:

5.3.2. Կազմակերպել շրջանավարտների մասնակցությամբ միջոցառումներ և հարցումներ, ներգրավել նրանց Քոլեջի գործունեության հետ կապված գործընթացներում:

Խնդիր 5.4 Արտաքին շահակիցների հետ կապի ապահովում (փոփ. 28. 02.2023, N1-02/23/):

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

5.4.1. Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվություն իրականացնելու նպատակով, պարբերաբար կազմակերպել «Բաց դռների օր», այցելել հիմնական դպրոցներ՝ ներկայացնելով Քոլեջը և ընդունելիության պայմանները:

5.4.2. Մասնակցել գիտակրթական ցուցահանդեսների, տոնավաճառների և աշխատաշուկային առնչվող միջոցառումների՝ ներկայացնելով Քոլեջի գործունեությունը, գործող կրթական ծրագրերը և ձեռքբերումները:

6. ԱՐԴԻԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Վերականգնել և ձևավորել կրթական ծրագրերի իրականացման պահանջները բավարարող Քոլեջական ենթակառուցվածքներ

Խնդիր 6.1. Վերականգնել և զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել Քոլեջի ենթակառուցվածքները

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

6.1.1. Մշակել առաջարկություններ Քոլեջի՝ ուսումնական անհրաժեշտ տարածքներով շուտափույթ բավարարման համար՝ այս հրատապ խնդրի լուծմանը առավելագույնս ներգրավելով ՇՏՀ կառավարման բարձրագույն մարմինն և տեղական ինքնակառավարման մարմիններին:

6.1.2. Մշակել Քոլեջի ուսումնական և օժանդակ տարածքների արդյունավետ օգտագործումն ապահովող ու ուսումնական գործունեության չափորոշիչ պահանջները բավարարող տարածքային պայմանների ձևավորման երկարաժամկետ պլան:

6.1.3. Մշակել Քոլեջի նյութատեխնիկական բազայի զարգացման հեռանկարային պլան, ստեղծել նախադրյալներ պլանի փուլային իրականացման համար:

6.1.4. Կրթական ծրագրերի պահանջներից ելնելով ստեղծել և տեխնիկապես վերագինել առկա լսարաններն ու ուսումնական լաբորատորիաները, սպորտդահլիճը, ձևավորել նորերը:

6.1.5. Իրականացնել սպորտդահլիճի, լսարանների և ուսումնական լաբորատորիաների վերանորոգման աշխատանքներ:

6.1.6. Ստեղծել Քոլեջի մասնաշենքի և ենթակառուցվածքների անվտանգության համակարգ:

Խնդիր 6.2 Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերը և գրադարանային ենթակառուցվածքները

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

6.2.1. Մշակել տեղեկատվական համակարգերի զարգացման հայեցակարգ:

6.2.2. Ապահովել Քոլեջի վարչական և ուսումնական գործընթացներին առնչվող տեղեկատվության թափանցիկությունը ներքին և արտաքին շահակիցների համար:

6.2.3. Զարգացնել ներքին համակարգչային լարային և անլար ցանցը՝ մեծացնելով օգտատերերի քանակը և կապուղիների թողունակությունը:

6.2.4. Շարունակել խթանել և խրախուսել Քոլեջում էլեկտրոնային (On-line) եղանակով ուսուցման դասընթացների մշակումն ու ներդրումը, վիրտուալ և հեռավար լաբորատորիաների հետագա զարգացումը:

6.2.5. Խթանել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը Քոլեջի հետազոտական և կրթական ծրագրերում՝ օգտատերերին ապահովելով ամպային տեխնոլոգիայի հնարավորություններով:

6.2.7. Ապահովել Քոլեջում մեկից ավելի ինտերնետ հասանելիության պրովայդերի առկայությունը:

6.2.4. Ստեղծել ժամանակակից գրադարան, ընթերցասրահ և գրապահոց:

6.2.5. Մշակել գրադարանի զարգացման հայեցակարգ:

6.2.6. Իրականացնել հիմնական ուսումնական գրականության թվայնացում:

6.2.7. Ընդլայնել ուսանողների հասանելիությունը միջազգային գրադարանային ցանցերին:

6.2.8. Ինտենսիվացնել ուսումնագիտական գրականության արդիականացման գործընթացը:

7. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ապահովել ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքեր դեպի Քոլեջ և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը

Խնդիր 7.1. Ապահովել անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներհոսքը Քոլեջ՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

7.1.1. ՇՏՀ ընդհանուր բյուջեի շրջանակներում ձևավորել Քոլեջի բյուջե՝ հաշվի առնելով նրա գործունեության առանձնահատկությունները և կադրային ներուժի հնարավորությունները:

7.1.2. Ընդլայնել Քոլեջի արտաբյուջետային միջոցների աղբյուրները և ծավալը, բարձրացնելով ֆինանսական աղբյուրների ռիսկերի կառավարման արդյունավետությունը:

7.1.3. Ներգրավել նվիրատվությունների բարեգործական մասհանումներ, ինչպես նաև պատվիրատու գործընկեր կազմակերպությունների հասցեական ներդրումներ:

7.1.4. Ակտիվացնել Քոլեջի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին:

7.1.5. Ընդլայնել և կանոնակարգել Քոլեջի վճարովի ծառայությունները:

7.1.6. Ապահովել շրջանավարտների և այլ շահակիցների հետ Քոլեջի և նրա առանձին ստորաբաժանումների շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները:

7.1.7. Վերլուծել Քոլեջի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր:

Խնդիր 7.2. Զարգացնել ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

7.2.1. Կատարելագործել Քոլեջի ֆինանսական կառավարումը՝ ֆինանսական գործունեության նորմատիվային բազայի հետագա զարգացման, կառավարման տեղեկատվական համակարգերի լայնածավալ ներդրման և կադրային կազմի պարբերական վերապատրաստման ու համալրման միջոցով:

7.2.2. Շարունակել ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգի և նյութական արժեքների հաշվառման գործընթացի ժամանակի պահանջներին ու խնդիրներին համահունչ կատարելագործումը:

7.2.3. Մշակել ֆինանսական և նյութական ռեսուրսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգեր՝ ապապիովելու բյուջեի բաշխումը ըստ Քոլեջի ռազմավարական նպատակների և խնդիրների:

7.2.4. Շարունակել շեշտադրված ռեսուրսախնայողական քաղաքականության իրականացումը: Զարգացնել էլեկտրաէներգիայի, գազի, ջրի և այլ նյութական ռեսուրսների խնայողության արդեն իսկ ներդրված տեխնիկական և կազմակերպչական նոր և արդյունավետ միջոցները:

7.2.5. Ներդնել ռիսկերի կառավարման համակարգ՝ շուկայական և տնտեսական տարաբնույթ ռիսկերի նկատմամբ Քոլեջի ռեսուրսների կայունությունն ապահովելու նպատակով:

8. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Կատարելագործել Քոլեջի կառավարման համակարգը և ապահովել կառավարման արդյունավետությունը և թափանցիկությունը: Նպաստել կրթության որակի ապահովման ներբուհական համակարգի զարգացմանը և հայեցակարգային-մեթոդաբանական հիմքերի բարելավմանը

Խնդիր 8.1 Բարելավել Քոլեջի կազմակերպական կառուցվածքը և կառավարման համակարգը՝ ՇՏՀ-ի ռազմավարական նպատակներին համապատասխան

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

8.1.1. Վերանայել և վերակազմավորել ՇՏՀ գործող վարչակազմակերպական կառուցվածքային ընդհանուր սխեման՝ կառավարման ապակենտրոնացման գործառույթների շրջանակներում համահամալսարանական մի շարք գործառույթներ ուղղակիորեն պատվիրակելով քոլեջի կառուցվածքային միավորներին:

8.1.2. Զարգացնել ՇՏՀ հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներում արդեն ավանդույթ դարձած և հաջողությամբ կիրարկված ստրատեգիտական պլանավորման գործընթացը՝ տեղայնացնելով այն Քոլեջի վրա:

8.1.3. Կատարելագործել և արդյունավետորեն կիրառել Քոլեջի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) համակարգը, դարձնելով այն Քոլեջի տարեկան գործունեության հաշվետվական վերլուծությունների հիմնական ուղղորդիչը:

8.1.4. Ապահովել ՇՏՀ Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի, Քոլեջի Ուսումնամեթոդական և Մանկավարժական խորհուրդների և կառավարման մյուս մարմինների ներդաշնակ գործունեությունը, ձևավորել որոշումների ընդունման և կատարման հստակ հիերարխիկ համակազ:

8.1.5. Ապահովել ՇՏՀ-ի, Քոլեջի և նրա առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման գործընթացներում ապակենտրոն, կոլեգիալ կառավարման սկզբունքների ընդլայնմանը և մրցակցային մեխանիզմների ներդրմանը միտված անհրաժեշտ նախապայմաններ:

8.1.6. Մշակել կառավարման արդյունավետ մեխանիզմներ:

8.1.7. Ապահովել կառավարման բոլոր մակարդակներում նորմատիվային հենքի վերանայում և արդիականացում:

8.1.8. Օպտիմալացնել և բարելավել Քոլեջի կազմակերպական կառուցվածքը՝ ապահովելով կառավարման «վերևից ներքև» և «ներքևից վերև» սկզբունքները:

8.1.9. Ներդնել ՊԻԳԲ (պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում) շրջափուլ քոլեջական բոլոր կանոնակարգվող գործընթացների համար և հետևել դրանց իրականացմանը:

8.1.10. Ապահովել Քոլեջի գործունեության հաշվետվողականությունը և թափանցիկությունը:

Խնդիր 8.2. Ներդնել ներքոլեջական էլեկտրոնային կառավարման համակարգ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

8.2.1. Արմատապես բարելավել Քոլեջի կառավարման համակարգի տեղեկատվական ապահովումը, ընդլայնելով վերջինիս արդյունավետ կիրառումը կառավարման բոլոր ոլորտներում:

8.2.2. Ապահովել Քոլեջի կառավարման բոլոր մակարդակներում իրավական-նորմատիվային բազայի (փաստաթղթային փաթեթների) շարունակական զարգացումը՝ օրենսդրական-կազմակերպական և ներքին կազմակերպական փոփոխություններին համահունչ:

8.2.3. Գործածության մեջ դնել քոլեջական էլեկտրոնային փաստաթղթա-շրջանառության համակարգը:

8.2.4. Ներդնել միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ՝ Քոլեջում որոշումների կայացման գործընթացի արդյունավետության բարձրացման համար:

Խնդիր 8.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի գործունեության արդյունավետությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

8.3.1. ՇՏՀ նոր կազմակերպական կառուցվածքի առանձնահատկություններին համահունչ՝ վերանայել և հաստատել Որակի ապահովման համակարգի վարչակազմակերպական լրամշակված սխեման՝ ներգրավված կառուցվածքային միավորների, դրանց պարտականությունների ու պատասխանատվությունների հստակ տարանջատմամբ և համապատասխան ընթացակարգերի սահմանմամբ:

8.3.2. Նախապատրաստել և ներդնել Քոլեջի նոր կրթական ծրագրերի հայտագրման, մշակման, տարեկան մոնիթորինգների և շրջափուլային վերանայումների ESG չափանիշներով նախատեսված գործընթացները:

8.3.3. Ընտրովի պիլոտային փորձարկումներից ու անհրաժեշտ լրամշակումներից հետո ներդնել Քոլեջի դասախոսական կազմի ամենամյա վարկանիշային գնահատման համակարգ՝ հիմնված ուսանողական հարցումների արդյունքների, դասախոսի ինքնագնահատման թղթապանակի և ամբիոնի կարծիքի համալիր ընդհանրացման հայեցակարգային սկզբունքի վրա:

8.3.4. Ընդլայնել և ամրապնդել ՈԱ գործիքամիջոցներով իրականացվող, կրթական ծրագրերից ու առանձին դասընթացներից ուսանողների և շրջանավարտների բավարարվածության գնահատման և նմանատիպ այլ սոցիոլոգիական ամենամյա հարցումների անցկացման դրական փորձը՝ ուսխորհրդի ակտիվ աջակցությամբ:

8.3.5. Ապահովել որակի գնահատման չափանիշների և գործառույթների առավելագույն թափանցիկություն Քոլեջի ներքին և արտաքին շահակիցների համար և ընթացիկ արդյունքների անվերապահ հրապարակայնացում, ստեղծել անհրաժեշտ և բարենպաստ պայմաններ ուսանողների լայն մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում ապահովելու համար:

8.3.6. Զարգացնել և կատարելագործել որակի ներքին ապահովման համակարգը Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի չափանիշներին ու ուղենիշներին համապատասխան:

8.3.7. Ներդնել մեխանիզմներ որակի ապահովման գործընթացներում շահակիցների առավելագույն ներգրավվածության և որակի մշակույթի ձևավորման ու տարածման նպատակով:

8.3.8. Մշակել, իրականացնել և մշտապես կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմներ՝ որակյալ կրթական ծառայություններ մատուցելու և արդյունավետ կրթական միջավայր ապահովելու նպատակով:

9. ՔՈԼԵՋԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ

ԱՊԱՀՈՎՈՒՄ

9.1. Իրականացնել Քոլեջի գործունեության ոլորտների նպատակների կատարողականի ցուցանիշների բենչմարքինգ:

9.2. Մշակել ռազմավարական ծրագրով նախատեսված նպատակներին հասնելուն ուղղված խնդիրների իրականացման գնահատման առանցքային ցուցիչներ:

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝



Ա.Ա. Առաքելյան